



# Սյունյաց երկիր

ՆԱԲԱԹ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016Թ.  
№ 38 (414)

www.syuniacyerkir.am

**Իսկ նենգ բանասերուն  
ցնծում է ուրախ.  
Թախծում է զունդը  
հրեշտակների,  
Սասանան՝ դարում լիրբ  
հոհոցով...**

Գրիգոր Նարեկացի,  
«Սասյան ողբերգության», Բան 7, Ա

## Հարցազրույց

Սյունյաց թեմի գործունեության, եկեղեցաշինության, Հայ առաքելական եկեղեցում առկա որոշ խնդիրների մասին է զրույցը Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ տեր Մակար վարդապետ Հակոբյանի հետ:

Հոգեշնորհ տեր Մակար վարդապետ Հակոբյանը ծնվել է 1979թ. հուլիսի 23-ին Գյումրիում, քահանայի ընտանիքում: 8-9 տարեկանից ծառայել է Սուրբ Յոթ վերջ եկեղեցում: 1994-97թթ. սովորել է ավարտել է Շիրակի թեմի Հոգեւոր ընծայարանը: 1997-2003թթ. սովորել է ավարտել է Սուրբ Էջմիածնի Գեորգյան ճեմարանը: 2003թ. դեկտեմբերին՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Գերաշնորհ տեր Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատությունը» թեմայով:

2004թ. մայիսի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Գերաշնորհ տեր Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի:

2004թ. նշանակվել է Մայր Աթոռի Մկրտարանում՝ տեսուչ: 2004-2005թթ. ծառայել է Տավուշի թեմում՝ Նոյեմբերյանի հոգեւոր հովիվ: 2005-2006թթ. ծառայել է Գոշավանքում՝ վանահայր: 2006-2011թթ. ծառայության է կոչվել Էջմիածնի Սուրբ Գայանե վանք՝ վանահայր:

2011թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Եկեղեցական կանոնները հայ կանոնական իրավունքի հուշարձաններում» թեմայով, եւ ստացել վարդապետական աստիճան ու գավազան:

2011թ. հոկտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ տեր Մակար վարդապետ Հակոբյանը նշանակվել է Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ:



## ՏԵՐ ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ. «Պայքարենք բոլոր արաբավոր երեւոյթների դեմ՝ ապրելով բարոյականության ճիշտ նորմերով, իսկ ամենամեծ բարոյականությունը քարոզում է Սուրբ գիրքը»

Էջ 4

## Կապանի լեռնահարստագման կոմբինատի երկրորդ եռամսյակի արտադրական ցուցանիշները

«Պոլիմետալ» ընկերության 2016թ. հոկտեմբերի 18-ին հայտարարված արտադրական արդյունքների համաձայն՝ Կապանի լեռնահարստագման կոմբինատը 2016թ. երրորդ եռամսյակում (սեպտեմբերի 30-ին ավարտված երեք ամիսը) արդյունահանել է 112 հազ. տոննա եւ վերամշակել 116 հազ. տոննա հանքաքար, արտադրել է 202,2 կգ ոսկի, 3,1 տոննա արծաթ, 300 տոննա պղինձ եւ 1,3 հազ. տոննա ցինկ խտանյութերում: «Պոլիմետալ» ընկերության կողմից ձեռք բերվելու պահից (2016թ. ապրիլի 28) արդյունահանվել է 181 հազ. տոննա, վերամշակվել է 180 հազ. տոննա, արտադրվել է 307,9 կգ ոսկի, 6,2 տոննա արծաթ, 400 տոննա պղինձ եւ 2 հազ. տոննա

ցինկ խտանյութերում:

Ներկայումս Կապանում իրականացվում են ինտեգրման եւ արտադրական պրակտիկայի փոփոխության միջոցառումներ, որոնք ներառում են անձնակազմի մոտիվացման համակարգի փոփոխություններ, սարքավորումների արտադրողականության վերլուծություն եւ նպատակային ստուգողական հորատում: «Պոլիմետալ» ընկերության ստորգետնյա արդյունահանում իրականացնող այլ ձեռնարկությունների առաջադեմ փորձը ներդրում են ինչպես տեղացի, այնպես էլ գործուղված աշխատակիցների կազմված աշխատանքային խմբեր:

Ստուգողական եւ արտաեզրագծային հո-



րատում իրականացվում է նաեւ Լիճքվազ հանքավայրում, որը գործող ֆաբրիկայի համար պետք է ապահովի հանքաքարի լրացուցիչ ծավալներ:

«Կապանի լեռնահարստագման կոմբինատ» ՓԲԸ մամուլի ծառայություն

## Կապան, դո՛ւ՛ իմ ներկան ու ապագան

Հոկտեմբերի 14-15-ին Կապանը տոնեց քաղաքի կարգավիճակ ստանալու 78-ամյակը: Տոնական միջոցառումներն այս տարի նշվեցին «Կապան, դո՛ւ՛ իմ ներկան ու ապագան» կարգախոսով: Միջոցառումների մեկնարկը տրվեց հոկտեմբերի 14-ին Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցում Ապրիլյան պատերազմում հերոսի մահով նահատակված Նորայր Գասպարյանի անվան դասասենյակի բացմամբ, որտեղ այսուհետ յուրահատուկ հայրենասիրական դաս կտան այնտեղ մտնող ամեն մի աշակերտի: Փոքրիկ հինգերորդիների մասնակցությամբ անցկացված գրական-երաժշտական ցերեկույթի ընթացքում ներկայացվեց նաեւ մերօրյա հերոսի կարճ, բայց բովանդակալից կյանքի ուղին:

Տոնի առթիվ այդ օրը Կապանի համայնքապետ Աշոտ Հայրապետյանն այցելեց նաեւ քաղաքի ամենատարեց բնակչուհուն՝ 102-ամյա Աշխեն տատին՝ նրան հանձնելով դրամական պարգև: Աշխեն տատն էլ իր հերթին բարեմաղթանքի եւ օրհնանքի խոսքեր հղեց երիտասարդներին՝ «Իրիքնակը ըրաները մի, աստղները՝ կլխավը շոռ տան»:

Հոկտեմբերի 15-ին Կապանի օրվան նվիրված միջոցառումների շարքը մեկնարկեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում օրհնության կարգ կատարելով, որին մասնակցում էր նաեւ Սյունիքի նորանշանակ մարզպետ Վահե Հակոբյանը: Եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեթումյանը շնորհավորեց տոնի առթիվ. «Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Աստված իր ամենազոր աջի ներքո պահի եւ պահպանի հայոց աշխարհը, Սյունյաց երկիրը, մասնավորաբար Կապան քաղաքը: Հուսով եմ՝ յուրաքանչյուր կապանցու երազանքն է տեսնել իր սիրելի քաղաքը շատ ավելի գեղեցիկ, բարեկարգ ու լուսավոր, ինչի համար պահանջվում է յուրաքանչյուրիս ջանքն ու եռանդը»:

Այնուհետեւ Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում տեղի ունեցավ խաչի օծում՝ ի փառաբանություն եւ ի փառք Աստծո: Խաչքարի հեղինակը «Կապան-2016 քանդակագործության առաջին սիմպոզիումի» մասնակիցներից Ալեքսան Առաքելյանն է: Ի դեպ, շուտով Կապանում կկանգնեցվեն նաեւ սիմպոզիումի մասնակից երիտասարդ կապանցի քանդակագործների այլ խաչքարեր եւս:

Տոնի մասնակիցներն իրենց խոնարհումը բերեցին նաեւ հայրենիքի անկախությունը կերտողներին՝ այցելելով Բաղաբուրջի եւ Գարեգին Նժդեհի հուշահամալիրներ:

Քաղաքի կենտրոնում քաղաքապետի եւ քաղաքի ավագներից մեկի ձեռամբ կտրվեց ավանդական տոնական տորթը, որը քաղաքապետին կից երիտասարդական խորհուրդը բաշխեց որոշ թաղամասերում՝ բաժին հանելով նաեւ քաղաքում տեղակայված զորա-

Էջ 2

Թերթի հաջորդ համարը լույս կտեսնի դեկտեմբերի սկզբին՝ խմբագրության աշխատակիցների՝ հերթական արձակուրդ մեկնելու պատճառով: Նոյեմբեր ամսին կգործի միայն թերթի կայքէջը՝ syuniacyerkir.am



# Կապան, դո՛ւ՛ իմ ներկան ու ապագան

մասի զինվորներին, «Արծաթաբույն» տարեցների կենտրոնի և բարեգործական ճաշարանի շահառուներին, հատուկ կրթահամալիրի, երեխաների խնամքի կենտրոնի, մանկական կենտրոնի սաներին:

Արդեն ավանդական դարձող կրոնավազքի և հեծանավազքի մրցաշարի այս տարվա մասնակիցների թիվը զգալիորեն աճել էր: Մրցանակային տեղեր զբաղեցրած 12 հոգին քաղաքապետարանից մրցանակներ, հավաստագրեր և գավաթներ ստացավ, իսկ «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպությունը նվերներ հանձնեց բոլոր մասնակիցներին: «Արեւորդի» հի-ն, որ վերջերս Կապանին նվիրել էր հեծանավներ, տոնի առթիվ դրանց թիվը եւս երեքով ավելացրեց:

Մշակույթի կենտրոնում տեղի ունեցած հանդիսավոր նիստում ելույթ ունեցավ Սյունիքի մարզպետ Վահե Զակոբյանը: Շնորհավորական ուղերձում նա մասնավորապես նշեց. «Քաղաքի տոնի առթիվ շատ տեսանելի այս միասնականությունը մի բան է վկայում. մենք միասնական ենք այն ամենի շուրջ, ինչն, իսկապես, սիրում ենք, իսկ մենք սիրում ենք Կապանը և յուրաքանչյուր կապանցուն: Ես ինքս ինձ ու ձեզ չեմ փորձի խաբել, թե մենք շատ արագ կարողանալու ենք բոլորիս հոգսերը թեթևացնել ու բոլոր վերքերը վաղն իսկ բուժել: Ո՛չ իհարկե: Բայց մի բանում հաստատ համոզված եմ: Համոզված եմ, որ կարող ենք կանգնել յուրաքանչյուր կապանցու կողքին, երբ նա դրա կարիքն ունենա՝ փորձելով օգնել նրան: Իմ այս համոզմունքը բոլորիս է վերաբերում և, իհարկե, առաջին հերթին՝ ինձ: Մենք միասին շատ բան կարող ենք անել ամեն մի կապանցու համար: Շատ եմ ուզում հավատալ, որ այսօրվա միասնականությամբ մենք քայլեր կանենք գալիք ողջ տարում: Եվ թող գալիք տարվա այս օրը դառնա ոչ միայն Կապանի, այլև կապանցու օրը: Այսօրվանից պետք է քայլեր ձեռ-



Մարկենք, որ այդ օրը նոր ասելիք ունենանք»:

Կապանի պատվավոր քաղաքացի Սվետլանա Գեւորգյանը նշեց, որ քաղաքը մեծ սիրով համընդուն են այսօրվա սերնդին, որ բանիմաց է, խելացի՝ միաժամանակ խորհուրդ տալով երիտասարդներին լինել համդուրժող և աշխատասեր: Նա ցանկություն հայտնեց տարեցտարի քաղաքի բնակչության թիվը՝ ավելացած, քաղաքը՝ կանաչապատ ու բարեկարգ տեսնել:

Կապանի քաղաքապետ Աշոտ Գալստյանը, շնորհավորելով տոնի առթիվ, մասնավորապես նշեց.

«Այս տոնը միավորում է բոլորիս, քանի որ նրա էությունն ու խորհուրդը մեկն է՝ սերն առ հայրենի քաղաք: Մաղթում են, նախեւառաջ, խաղաղություն՝ արժեք, որն ամենից բանկն է պատերազմ տեսած քաղաքի համար, և որի կարևորությունը, ցավոք, եւս մեկ անգամ զգացինք այս տարի: Խաղաղություն է այն գրավականը, որը պիտի թույլ տա արարել, կառուցել, զարգացնել համայնքը»: Տոնի առթիվ նա շնորհակալագրեր է պատվոգրեր հանձնեց քաղաքում ներդրում ունեցող տարբեր բնագավառների ներկայացուցիչներին:

Տոնական միջոցառումների շարքը եզրափակվեց համերգով՝ կապանցի կատարողների ու ստեղծագործական խմբերի մասնակցությամբ: Դե իսկ երեկոյան կապանյան երկինքը լուսավորվեց տոնական հրավառությամբ:

Բոլորիս մաղթանքը մեկն է՝ թող խաղաղություն լինի հայոց երկնակամարում, իսկ թնդանթերն արձակեն միայն գունավոր ու թղթ «փամփուշտներ»:

Ի դեպ, Կապանի օրվան իր յուրահատուկ նվերը մատուցեց «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբը՝ 4:0 հաշվով հաղթելով «Բանանց»-ին:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Մեռնող ձորերը

Անցորդ, դու երբեւէ եղե՞լ ես Ծիծեռնականքում: Այնտեղ գնալու երկու ճանապարհ կա. մեկը հասնա՞ս պատմական գյուղով է, իսկ մյուսը՝ Չաբուղի կամրջի մոտից Աղավնո գետի կեռնանները մեկիկ-մեկիկ կրկնող, նրա կողքով մեկնված ճանապարհով: Բայց այսօր խոսքը վանքի մասին չէ, այլ նրա մոտ տանող երկրորդ ճանապարհն ու ձորը զարդարող, նրա պատերին, պարիսպներին քվող երբեմնի Աղավնո գետի: Գետն ահա քանի տարի է՝ «այնտեղ չէ: Այն գողացել են, տարել, թաքցրել»:

Աղջիկս երեք տարեկան էր: Ինչպես բոլոր փոքրերին, նրան էլ էինք հեքիաք պատմում: Պատմում էր մայրը, պատմում էի ես: Մի օր էլ նա դիմեց ինձ՝ կուզե՞ս, քեզ հեքիաք պատմեմ: Պատմիր: Ու նա սկսեց: «Մի անգամ աթոռը գնում է անտառ...»: Սպասիր, սպասիր, աթոռն ինչպե՞ս կարող է գնալ անտառ: Դստրիկս հակադարձեց՝ բա նա ոտքեր չունի: Երկաթյա տրամաբանություն: Ես լռեցի, ու նա շարունակեց...

Այս տրամաբանությամբ, եթե ձորերը կանաչում, շնչում են, ասել է թե՛ ապրում են, ուրեմն կարող են նաեւ մեռնել: Ու... մեռնում են: Այո, մեր աչքի առաջ մեռնում են Վարարակն գետի հունի Գորիս-Օակեր հատվածի, կամ ինչպես ընդունված է ասել, Քարահունջի այգիների և ազատագրված տարածքի Ծիծեռնականք-Չաբուղի կամուրջ հատվածի Աղավնո գետի հունի ձորերը: Բայց չէ, ճիշտ չեմ, ոչ թե մահանում են, այլ սպանում ենք, որովհետեւ բռնություն ենք կիրառում...

Տասնյակ տարիներ առաջ՝ անցած դարի 60-ականներին, Գորիսի շրջան է այցելում Անաստաս Միկոյանը: Տեղ գյուղում աշխատավորների հետ հանդիպելուց հետո ցանկություն է հայտնում թեկուզ հեռվից նայել դեպի Դարաբաղ-Արցախ: Նրան ուղեկցում են Աղավնո գետի հուն նայող բարձունք: Մի քանի րոպե հայացքը դեպի Արցախ հառելուց հետո դառնում է ու շարժվելով դեպի ավտոմեքենա, բոլորին լսելի ձայնով ռուսերեն արտասանում. «Времена, времена, да, азербайджанские большевики оказались умнее наших...»: (Հ.Սիմոնյան, «Ինչպես եղել է», Երևան-2016թ.): Մերօրյա հերոսներն ուղղեցին 20-ական թվականների հայ բուլեզիկների սխալը, ուղղեցին, որպեսզի վայ հերոսներն էլ սպանեն ազատագրված ձորը: Այո, եթե ձորից գողանում, խլում ես նրան սնող, սնուցող, շունչ ու կենդանություն տվող նրա գարող գետը, ուրեմն սպանում ես նրան:

Մանկության օրերին, երբ այդ տարածքներում թուրքեր էին ապրում, հաճախ են եղել Աղավնո գետի հեց այդ հատվածի ափերին, հորս հետ ուռկանով ձուկ որսացել, երիտասարդության տարիներին էլ ընկերներով լողացել գետում, վայելել գետափին հանածախի խոջա Սարգիսի թթնու այգու քաղցրահամ պտուղները: Թուրքերը լավ գիտեին, որ այդ այգիները մեր պապերի հիմնածն են, ծպտում չէին համում: Այդտեղ ծառեր կային, որոնց բներին հաստությունը երկու մարդու գրկաչափից էլ հաստ էր:

20 տարուց ավելի է, ինչ տարածաշրջանն ազատագրված է: Գետի ափերին նախկին թուրքաբնակ բոլոր գյուղերը չէ, որ բնակեցված

են, իսկ բնակեցված գյուղերից յուրաքանչյուրում էլ ապրում է 10-12 ընտանիք: Նրանց ահից Գորիսի տարածաշրջանի խոզնավար, Վաղատուր եւ հանածախ գյուղերի անասնապահները փորձ էլ չեն անում անասուններն իջեցնել գետի վերին հատվածները՝ ջրելու, տարածքի նոր սեփականատերերը թույլ չեն տալիս: Սա, իհարկե, գրույցի այլ թեմա է: Հիմա նորից դառնանք ձորի Ծիծեռնականք-կամուրջ հատվածին:

Այս հատվածի մահը, ավելի ճիշտ կլինի ասել՝ կլինիկական մահը, վրա է հասել տարածաշրջանն ազատագրելուց անմիջապես հետո: Երբ տարածքը դարձավ մերը, ասել է թե՛ ոչ մեկինը, սկսվեց կանաչ հատվածի քարոզը: Սկզբում գոհ գնացին գետի աջ ափի խնձորենու զանգվածային այգիները: Դաժան որս էր գնում հատկապես ընկուզենու ծառերի նկատմամբ: Պատճառն արտերկրում դրա փայտամյուսին տրվող բարձր գինն էր: Այդ ձեռով ձորում զոհվեցին հարյուրավոր ընկուզենիներ: Դրանց մեջ կային այնպիսի դարավոր հսկաներ, որոնցից յուրաքանչյուրը բերքառատ տարում տոնային մոտ բերք էր տալիս: Չար լեզուներն ասում են, թե ծառերի այդ տեսակի որսը շարունակվում է այսօր էլ, բայց արդեն տարածաշրջանի անտառային հատվածում: Պտղատու ծառերի հատումն ավարտելուց հետո տարածքում բնակվածները ձեռքները զարկեցին գետի հետ եկած սերմերից նրա աջ ու ահյակ ափերին անած բարդենու և ուռենու ծառերի ոչնչացմանը: Դրանք որպես էժան վառելիքայտ վաճառվում էին տարածաշրջանի գյուղերում: Կարճ ժամանակում այդ գործն էլ «հորով մորով» արեցին: Մնաց որբացած, հագուստ-կապուստից զրկված գետը: Այ, գետի և ձորի այս վիճակն են կլինիկական մահվան վիճակ համարում: Եթե գետը հանգիստ թողնեին՝ ինքն իրեն կվերականգնվեր: Բայց չէ, չեն թողնում: Ձրի բերած սերմերից գլուխ բարձրացնող շիվերը մեկերկու տարի անց նորից հատվում են, այս անգամ էլ որպես լրբու կամ բոստանային այլ մշակաբույսերի հենափայտ: Բայց դե՛ աստված բեքարից փրկի: Գետի համար եկան ավելի վատ օրեր: Գտնվեցին մարդիկ, ովքեր կարողացան համոզել բնապահպանության նախարարության կամ մնամատիպ կազմակերպությանը փոխարինող կառույցների ղեկավարներին, որ շրջակա միջավայրի, գետի և հանրային շահերից ելնելով անհրաժեշտ է Ծիծեռնականք-Չաբուղի կամուրջ 12 կիլոմետրանոց հատվածի վրա 4 հիդրոէլեկտրակայան կառուցել, որ դա շրջակա միջավայրին ոչ մի վնաս չի հասցնի, դրանից ծառերը չեն չորանա, գետի ֆաունան չի փոխվի: Մի խոսքով՝ դա արվել է ու դեռ արվում է՝ ելնելով երկրի ու շրջակա միջավայրի գերակա շահերից: Մնում է ինչել հայտնի ֆիլմի հայտնի հերոսի խոսքերը՝ մարդիկ ո՞նց չեն ամաչում իրենց կերած հացից:

Առաջին անգամ ձորն այս վիճակում տեսնելիս հիշեցի երիտասարդությանս տարիներին կարդացած մի արձակ բանաստեղծություն: Ահա այն. «Վրենը լցվել էր ձորը, սիրահարվել ջրերին: Ձրերն այդ սիրուց խենթացան, ջրերն այդ սիրուց եթեր բարձրացան: Ձորը կողոպտվեց, ձորը որբացավ: Մեռնում էր ձորը, եւ փրկող չկար»:

Ահա այսպես Աղավնո գետի կլինիկական մահը փոխակերպվեց իրական մահվան: Գետը սարերից իջնում, իր դարավոր հունով հոսում, հասնում է դարերի տարիք ունեցող Ծիծեռնականքի մոտ, այնտեղ ծունկ տալիս, ու... «վերջանում»: Այստեղից գետը գողանում են, գետը



րենն նրա դեմ էր: Երիտասարդ Սամվելը հայտնվում է բանտում: Մինչև Չայրենական մեծ պատերազմի սկսվելը անհնազանդության համար երեք անգամ դատվում է: Բանտից ազատվելուց հետո մեկնում է պատերազմ, որտեղ կորցնում է մեկ ոտը: Տանը նրան են սպասում սիրելի կինը՝ Յեղիմեն, եւ Գրիշա ու Միշա որդիները: Յետո ծնվում են Բորիսը, Ալբերտը, Սաշան, Սուրիկը, Յուրիկը եւ Գագիկը:

*Ծնողները վաղուց չկան, բայց տոնական օրերին փոքրերի կողմից ավագներին այցելության գնալու ավանդույթը պահպանվել է:*

Չայկական նահապետական յուրաքանչյուր տան պատին միշտ լինում է այդ տոնի սիրելի լուսանկարը: Տասնյակ տարիներ Առուշանյանների տան պատից օջախի դուռը բացողին է նայել Ջորավար Անդրանիկը, ում պատանի Սամվելը տեսել էր հայրենի համայնքում 1918 թվականին: Դա էլ, հասկանալի է, խորհրդային իշխանության սրտով չէր: Այսօր այդ լուսանկարից արված յուղանկարը Գագիկի աշխատանքային պատին է:

Խորհրդային իշխանության վերջին տարիներին, այսպես ասած վերակառուցման տարիներին, սկսվեց

Կոոպերատիվ շարժման առաջին տարիներին Գորիսում բուռն վերելք ապրեց թեթև արդյունաբերությունը, իսկ ավելի ծիշտ՝ տրիկոտաժագործությունը: Եղբայրներից ամենափոքրը՝ Գագիկը, առաջիններից մեկը սեփական արտադրություն հիմնեց 16 աշխատատեղով: Բայց շուտով նոր պրոբլեմներ ի հայտ եկան: Խորհրդային իշխանության անկումից հետո փաստորեն վերացան նաև առևտրային հարաբերությունները: Պակասը լրացրեց Արցախյան շարժման ընթացքում վայ հարեանների իրականացրած շրջափակումը: Արտադրության կազմակերպմանը զուգահեռ սկսեց զբաղվել նաև իրացման հարցերով: Հիմնական սպառողը Ռուսաստանն էր: Զբաղվում էր, ինչպես ինքն է ասում, չսի-

# ԳԱԳԻԿ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ. Միշտ պրպրող ու գտնող, նաեւ ուրիշի ցավով ապրող գործարարը



Խորհրդային տարիներին մեզ դաստիարակել են, որ հարուստ լինելը վատ բան է, շատ վատ: Մինչև այդ իշխանության մայրամուտն էլ «պատերազմը՝ պալատներին, խաղաղությունը՝ խրճիթներին» շարունակվում էր: Դա պետական քաղաքականություն էր:



50-ական թվականների վերջերին Գորիսի շրջանի ղեկավարներից մեկին աշխատանքից ազատելու հիմնական պատճառների մեջ եղել է եւ այն, որ վերջինս չտեսնելու է տվել մի կոլտնտեսության նախագահի կողմից բազմանդամ ընտանիքի համար երկհարկանի տան կառուցումը: Խորհրդային իշխանությունը միայն Ստալինի մահից հետո գյուղացուն թույլատրեց երկրորդ կովն ունենալ: Երախտապարտ գյուղացին էլ այդ առթիվ երգ ծոնեց խորհրդային նոր ղեկավարին՝ չորս ոչխար, երկու կով, կեցցե ընկեր Մալենկով: Ամենուր իշխում էր այն հոգեբանությունը, թե ինչու է մեր հարեանը լավ ապրում, եկեք այնպես անենք, որ նա էլ մեզ նման վատ ապրի: Խորհրդային իշխանությունը վաղուց չկա, բայց նրա դաստիարակությունը դեռ պտուղներ է տալիս: Եթե մեկը հարուստ է, ուրեմն նա վատն է, ուրեմն նա գող է...

բուրիին հայտնի Չապաեի ութ որդիներից կրտսերի՝ Գագիկ Սամվելի Առուշանյանի մասին է: Գորիսում շատերը մակամուն ունեն: Հաճախ դրանք խիստ տիպական են լինում, մի հատիկ բառը բացահայտում է տվյալ անհատի ամբողջ էությունը՝ դրական, թե՛ բացասական իմաստով, առանձին դեպքերում էլ դառնում պատվանկան հոմանիշ, ինչպես այս պարագային է: Համարձակության, համառության, նպատակին հասնելու անկոտրում ձգտման համար է ժողովուրդը Սամվել Առուշանյանին պատվել սիրելի հերոսի՝ Չապաեի անվամբ, իսկ որ այդ ազգանունով անհատը ժողովրդական հերոս է եղել՝ հարցրեք անցած դարի 30-70 թթ. սերնդին: Այդ սերնդի մարդկանցից յուրաքանչյուրը հավանաբար մեկ տասնյակից ավելի անգամ դիտել է համանուն,

կոոպերատիվ շարժումը, ասել է թե՛ եկավ նաև Սամվել Առուշանյանի սերնդի ժամանակը: Առաջ անցնելով ասենք, որ ութ եղբորից յուրաքանչյուրը մի անհատականություն է: Արտաքին մտանությունից զատ, նրանք մի այլ մտանություն էլ ունեն՝ կազմակերպական բարձր ունակություն ու աշխատասիրություն: Բորիսի ստեղծած գյուղատնտեսական կոոպերատիվը, չնայած դժվարություններին, մեծացավ, ամրացավ, բարգավաճեց: Այսօր ոչխարի եւ խոշորի նրա հոտերն Արցախի տարածքում են: Արցախում է նաև Սաշայի գյուղատնտեսական ՍՊ ընկերությունը, որը եւս հիմնականում զբաղվում է ոչխարաբուծությամբ: Ալբերտը մեխանիզացիայի փոքր շարժակազմ ունի: Աշխատում է ազատագրված տարածքներում: Սուրիկն արդեն մի քանի տարի է՝ տեղափոխվել է ազատագրված տարածքներ եւ արդեն երրորդ տարին է՝ 3 հեկտարի վրա իր հիմնած արքայախնձորի եւ նույն այգու բերքն է հավաքում: Միշան բաղ ու բոստան, նաև սննդի օբյեկտ ունի: Ահա այսպիսին են Չապաեի տղաները, ովքեր, ամուր պահելով եղբայրական կապերն ու իրենց ծնողների հիշատակը, իրար զորավիզ են եւ հաճախ են ձեռք մեկնում նաև շրջապատին:


րած գործով՝ առևտրով: Պատաստի ապրանքը դժվարությամբ տեղափոխում էր Ռուսաստան՝ ոչ թե վաճառում, այլ փոխանակում Չայաստանում շատ թե քիչ պահանջարկ ունեցող այլ ապրանքի հետ եւ նույնպիսի դժվարություններով էլ հասցնում Չայաստան:

Չայտնի հարեանի հետ հարաբերությունների պրոնը լուրջ ուղղումներ մտցրեց Գագիկի ծրագրերի մեջ: 1989 թվականից նա Արցախյան շարժման նվիրյալ խնձորեկցի Սանոյի օրկատուն էր: Երբ տարածաշրջանում հարաբերական խաղաղություն տիրեց, նորից ձեռնամուխ եղավ սիրած գործին, իսկ սիրած գործն արտադրությունն է: Ինքն իրեն այսպես է բնութագրում. հաճույք են զգում, երբ տեսնում են, թե ինչպես է իմ տեղադրած հաստոցը հարթ թիթեղին ձեւ տալիս: Հարցնում են՝ տեղա՞յլ է արդյոք ամերիկացի հայտնի միլիոնատիրոջ պատասխանին՝ իր հարստության ծագման մասին: Ժպտալով՝ թեթև զլխով է անում: Այս հարցը Գորիսում ուղղել են նաև նրա տիկնոջը՝ Այային: Համարյա նույն պատասխանն են լսել՝ ուր-ուր, բայց Գորիսում իրենց, իրենց տոհմին լավ են ճանաչում, կարող է ցույց տալ առաջին լուսայից մինչև այս աշխատանքային օրվա եկամուտը:

Չայտնի անկատելի տեղափոխվում է, ինչպես ընդունված է մեր օրերում ասել, այլ հարթություն: Ես մի այլուժե եմ իշխում գեղարվեստական ստեղծագործությունից գործարար մարդու կյանքի, կենցաղի մասին: Հափշտակվում է: Հեղինակին է հարցնում: Մոռացել են, չեն կարողանում օգնել: Չանգահարում է դատերը, հայտնում ստեղծագործության վերնագիրը, խնդրում օգնել: Քիչ անց դուստրը հետ է զանգահարում: Համացանցում գտել է ստեղծագոր-

# ՏԵՐ ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆ.

## «Պայքարենք բոլոր արափավոր երեւույթների դեմ՝ ապրելով բարոյականության ճիշտ նորմերով, իսկ ամենամեծ բարոյականությունը քարոզում է Սուրբ գիրքը»



**-** 3 այր սուրբ, պատմական տարբեր ժամանակաշրջաններում Սյունյաց թեմն իր մեջ ներառել է նաև Վայոց ձորը: Հատերը նույնիսկ արհեստական են դիտում Սյունյաց եւ Վայոց ձորի թեմերի տրոհումը: Դա ինչպե՞ս կբացատրեք. ժամանակի՞ հրամայականն էր թեմի տրոհումը, թե՞...: Հնարավո՞ր է, որ հետագայում վերանայվի այդ որոշումը, թե՞ պարզապես իրողություններն են փոխվել:

– Սյունյաց թեմը, որ բավականին ընդգրկում տարածք է զբաղեցրել, Սուրբ Ներսես Մեծ Հայրապետի օրոք վեր է կածվել մետրոպոլիտության՝ իր կազմում ներառելով տարբեր տարածաշրջաններ:

**||** Եթե այսօր պատմական իրողությունը վերականգնենք, ապա շատ թեմեր պետք է միավորվեն: 1988թ. Հայաստանում գործում էր երկու թեմ՝ Արարատյան եւ Շիրակի, 1989թ. երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը ստեղծեց եւս երկու թեմ՝ Սյունյաց թեմն առանձնացնելով Արարատյան թեմից եւ Գուգարաց թեմը՝ Շիրակի թեմից: Սյունյաց թեմն այդ ժամանակ ներառում էր Սյունիքի եւ Վայոց ձորի վարչական շրջանները:

Հետագայում երջանկահիշատակ Գարեգին Ա Վեհափառը ստեղծեց եւս չորս թեմ, իսկ ներկայիս Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Վեհափառը Սյունյաց թեմից առանձնացրեց Վայոց ձորի թեմը, ինչպես նաև ստեղծեց Արթիկի թեմը: Առհասարակ թեմերը միա-

վորելով կամ առանձնացնելով չենք փառավորվում. թեմի ստեղծման նպատակն է՝ ժողովրդին ավելի մոտ եւ հասու լինել, իսկ երկու մարզի հավատավորներին միաժամանակ ծառայելը հոգևոր սպասավորներին համար բավականին դժվարություններ է առաջացնում: Այնպես որ Սյունյաց եւ Վայոց ձորի թեմերի առանձնացումը միանշանակ բխում է հոգևոր շահերից, այստեղ քաղաքական եւ նյութական որեւէ հարց չի կարող լինել: Ավելին ասեմ՝ թեմերի առանձնացման դրական արդյունքները տեսանելի են բոլորի համար:

– Սյունյաց թեմի առաջնորդահաստ եկեղեցին դարեր շարունակ եղել է Տաթևի վանքը: 20-րդ դարակազմից Ներսես Մելիք-Թանգյան արքեպիսկոպոստը, երբ թեմի առաջնորդ էր, առաջնորդահաստ եկեղեցին տեղափոխեց Գորիս՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: 1989թ., երբ վերականգնվեց Սյունյաց թեմը, առաջնորդահաստ եկեղեցին կրկին Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին դարձավ: Ձեր նկատառումներն այս հարցի շուրջ:

– Սյունյաց թեմը պատմական տարբեր ժամանակներում առաջնորդահաստ տարբեր եկեղեցիներ է ունեցել: Առաջնորդարաններն ընտրում է վեհափառը, բայց ինձ համար բնավ մշակութային չունի, թե որտեղ կլինի այն, կարելու է, թե ինչպես կաշխատի: Նույն հաջողությամբ կարող են ասել, թե ինչու Կապանի կամ Սիսիանի եկեղեցիներից մեկը չէ առաջնորդահաստը: Ընդհանրապես առաջնորդարանի աշխատանքները կազմակերպելու համար տարբեր լծակներ են հարկավոր: Գորիսը տարբեր տարածաշրջանները միավորող ճանապարհների հանգուցակետում է, եւ թերեւս պատճառներից մեկն էլ դա է եղել, որ ժամանակին Ներսես Մելիք-Թանգյան արքեպիս-

կոպոսն առաջնորդահաստ եկեղեցի է դարձրել Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Բայց դա չի նշանակում, որ Տաթևի վանքը կորցրել է իր դերակատարությունը. պատմական բոլոր ժամանակներում էլ այն ունեցել է եւ կունենա իր անզուգական տեղն ու դերը մեր հոգևոր-մշակութային կյանքում:

– Որքանով տեղյակ ենք, հոգևոր տաճարներն այսօր երկու կարգավիճակով են հանդես գալիս՝ մի մասը՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի, իսկ մյուս մասը՝ պետության տնօրինության ներքո: Պարզաբանեք, խնդրեմ, ի՞նչ ասել է Սյունյաց թեմ՝ եկեղեցիների, սրբավայրերի եւ այլ հոգևոր հաստատությունների ընդգրկման առումով:

– Սյունյաց թեմն ունի գործող 22 եկեղեցի: Կանոն Աստծո, այս տարի մեր ճշմարիտ հավատացյալների շնորհիվ վերասօծել ենք մոխիրներից վեր հանած երեք եկեղեցի: Ցավում են, որ, ՀՀ մշակույթի նախկին նախարարի համոզմամբ, եկեղեցին եւ խաչը զուտ հուշարձան կամ պատմական արժեք են: Մեզ համար եթե խաչ է կամ եկեղեցի, ապա այն առաջին հերթին Աստծո հետ է կապված: Եթե մի տաճարում պատարագ եւ աղոթք չեն հնչում, ուրեմն այն մատնված է կործանման: Հոգևոր տաճարների մի մասը պետության ենթակայությամբ գտնվելը Մայր աթոռը պատճառաբանում է հետեւյալ կերպ. դրանց պահպանման համար հսկայական միջոցներ են հարկավոր, որոնք Մայր աթոռը չունի: Այդ է պատճառը, որ հոգևոր տաճարների մի մասը ժամանակավորապես հանձնվել է պետության հոգածությանը՝ նպատակ ունենալով նախառաջ կանխարգելել դրանց ճարտարապետական դեմքի աղավաղումը, զանձագողությունը եւ այլն: Այլ հարց է, թե պետությունն ինչպես է իրականացնում դրանց

պահպանումը, բայց դա բնավ չի նշանակում, որ աղավաղումներ տեսնելիս Մայր աթոռն իրավունք չունի քննադատելու: Վերականգնողական բոլոր աշխատանքները մշտապես իրականացվում են փոխադարձ համագործակցության պայմաններում: Սյունյաց թեմի տարածքում գտնվող յուրաքանչյուր խաչքար եւ եկեղեցի նախեստառաջ հայ ժողովրդին է, եւ այնտեղ թույլ տրվող ամեն շեղում պետք է հնարավորինս կանխարգելենք:

– Ունե՞ք մարզում գտնվող եկեղեցիների, խաչքարերի հստակ հաշվառում:

– Թեմում կոնկրետ տվյալներ չունենք, իսկ պատմական հուշարձանների պահպանության համապատասխան կառույցները հաստատ ունեն: Բայց պետք է արձանագրեմ, որ Սյունիքն այդ առումով ամենահարուստ շրջաններից է: Այստեղ յուրաքանչյուր գյուղում մեկ եկեղեցու գոյությունը պարտադիր է, եթե ոչ ավելին: Սյունեցիները պետք է իրենց լավ զգան նաև այն առումով, որ ՀՀ տարբեր մարզերի համեմատ այստեղ եկեղեցաշինությունը լայն թափով է զարգանում:

**||** Իմ՝ առաջնորդական տեղապահ նշանակվելուց հետո մարզում ութ եկեղեցի է վերասօծվել, կանոն Աստծո, այս տարի եւս մեկը կվերասօծենք:

Այս պահի դրությամբ մարզում վերականգնվում են Տեղ գյուղի Սուրբ Գեորգ, Մեղրու Սուրբ Անապատանաց եկեղեցիները, գրեթե ավարտին է հասցվել Լորի Սուրբ Հովհաննես եկեղեցու վերականգնումը: Վահանավանքում կառուցվում է սուրբ խորանը, հավատացյալների ջանքերով տեղադրվել

են դռները, լուրջ ծրագրեր ունենք Սիսիանի նորոգման քաղաքապետ Արթուր Սարգսյանի հետ՝ Որոտնավանքում վերականգնողական աշխատանքները շարունակելու առումով: Մեկ բարերարի հովանավորությամբ, ով ցանկանում է իր անունը գաղտնի պահել, շուտով կտեղադրվեն նաև Որոտնավանքի դռները. պարզապես դիմել ենք մշակույթի նախարարությանը, որ համապատասխան գծադրերը տրամադրեն (հիմա արդեն այլ գերատեսչության տնօրինության ներքո է գտնվում): Նախատեսվում է հնձորեսկուն նոր եկեղեցի կառուցել՝ պայմանով, որ Հին հնձորեսկի Սուրբ Հովհաննես եկեղեցին չի ամտեսվի:

– Հատերին է հուզում այն հարցը, թե ինչու Վահանավանքը մինչ օրս, վերականգնումից հետո անգամ (այլ հարց է, թե ինչ որակով են իրականացվել աշխատանքները), Մայր աթոռի տնօրինության ներքո չէ: Կամա թե ակամա այն գործող տաճար է հանրության համար:

– Հակառակ իմ կամքի՝ մոտ վեց ամիս առաջ դիմել եմ Մայր աթոռին՝ Վահանավանքը մեր հովանու տակ առնելու համար: Ինչո՞ւ եմ ասում հակառակ իմ կամքի, որովհետեւ այստեղ վերականգնողական աշխատանքներն իրականացվել են բազում թերություններով: Աշխատանքներն իրականացնելիս բավականին մեծ գումարներ են «կերել». կարծում եմ՝ եկեղեցուց «ուտելը» նույնն է՝ Աստծուց գողանալ: Բայց դեռես մշակույթի նախարարության հետ այդ հարցի շուրջ համաձայնության չենք եկել. կարծում եմ՝ նոր կառավարությունն այլ մոտեցում կցուցաբերի: Մշտապես ձգտել եմ ձգտում եմ Վահանավանքի՝ Մայր աթոռի ենթակայության տակ անցնելու հարցը լուծված տեսնել: Այնպես որ՝ սա օրակարգային հարց է ոչ միայն թեմի, այլև Մայր աթոռի համար: Ավելին՝ Վահանավանքը նույնպես գտնվում է Մայր աթոռի այն ցանկում, որով նա դիմել է պետությանը՝ որոշ եկեղեցիներ եւ վանքեր իր հովանու ներքո վերցնելու համար:

– «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակներում վանքի տարածքում բավականին լուրջ աշխատանքներ են կատարվել եւ կատարվում: Ծրագրում ներառվել են նաև հոգևոր կյանքի զարգացման հետ կապված մի շարք կետեր: 2010թ.-ից մինչ օրս ինչպիսի՞ աշխատանքներ են իրականացվել: Չնայած հաճելիորեն պետք է արձանագրենք, որ վանահայր Սիբայելի շնորհիվ հոգևոր կյանքն այնտեղ բավականին ակտիվացել է:

– Անցյալ տարի Վեհափառ հայրապետ Գարեգին Բ-ի, բարերար Ռուբեն Վարդանյանի, Մայր աթոռի եւ մշակույթի նախարարության ճարտարապետական խորհուրդների մասնակցությամբ տեղի ունեցած հանդիպման ժամանակ 3D տարբերակով վանքի վերականգնման աշխատանքների ներկայիս ճարտարապետ Արտյոմ Գրիգորյանը, ով բավականին լուրջ արխիվային ուսումնասիրություններ է կատարել, ներկայացրեց վանքի վերականգնման աշխատանքների հետագա ընթացքը: Քննարկումից հետո մեկնարկեցին հնագիտական, ընդերքի ուսումնասիրման աշխատանքները: Բացվեց վանքի իսկական մուտքը, ներկայումս վերականգնողական այլ աշխատանքներ են իրականացվում: Ճեմարան կամ միաբանություն հիմնելու ծրագիր նույնպես կա. որքանով տեղյակ եմ, այստեղ պետք է կառուցվեն շենք-շինություններ, այդ թվում՝ ճեմարան: Եթե Տաթևի վանքում ճեմարան բացվի, թեմն ավելի կհզորանա:





Վարարակնի բարձրադիր ափին

Լոր պարտավորությունները, տված վնասի համար դրամական փոխհատուցում ապահովել, այգիների, բանջարանոցների ոռոգման համար ջրատար առուներ կառուցել, դրան էլ գումարած լրացուցիչ աշխատատեղեր ստեղծել՝ յուրաքանչյուր կայանի հաշվով ութ աշխատատեղ: Ամեն ինչ լավ է, գայլերը կուշտ են, ոչխարները՝ ողջ: Միայն չգիտես՝ ինչու այգիների սեփականատերերը չեն բաժանում գյուղապետի լավատեսությունը:

Մի դիտարկում եւս: Հասկանալի է, որ բնապահպանության նախարարությունը, ինչպես նաեւ շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակի համար պատասխանատու հանրապետական մարմինները նման աշխատանքներ կատարելու համար կանխավ տվել են իրենց համաձայնությունը: Վերջին տարիներին մեր հարուստ լեզվի բառապաշարին մի օտարածին բառ էլ է ավելացել՝ մոնիտորինգ, որը զարմանալիորեն միշտ չէ, որ օգտագործում ենք բարձրամակարդ: Եթե բարձրանենք, կնշանակի ստուգում, վերահսկում: Ավանայից հարցեր են ծնվում, թե ինչու կառուցման իրավունք տվող փաստաթղթերը ստորագրելուց հետո մոնիտորինգ չի կատարվում, չի ստուգվում գործերի իրական վիճակը, թե՞ դա իրենց պարտականությունների մեջ չի մտնում: Իսկ եթե այդ մոնիտորինգ ասվածն իրականացվել է ու պարզել, որ ամեն ինչ նորմալ է, ապա դա շատ անհորմալ է: Փորձեցիք տիեզերքից կատարված ձորերի նշված հատվածների իրական վիճակը, բայց համացանցում հասկանալի պատճառներով ռեալ ժամանակով այդ տեղանքների պատկերները բացակայում էին: Եղած լուսանկարները ցույց են տալիս պատկերը Աղավն գետի տարածքում 2001թ. վիճակում, երբ ձորում գետ կար, իսկ նրա ափերին՝ ծառեր...

3.4. Զգիտե՛մ ինչու, բայց համոզված եմ, որ գրածս դարձյալ մնալու է որպես ծայն բարբա-

### Լեզուների իմացությունը՝ աշխատանքի ընդարձակության լայն հնարավորություն

Գորիսի Ս.Խանգաղյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի դասիչուն էին հավաքվել քաղաքի տարբեր դպրոցների աշակերտներ, մանկավարժներ: Նրանց այդտեղ էր բերել «Մասնագիտական օրեր» ծրագրի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը: Այդ ծրագրի շրջանակում Գորիս էր ժամանել Երեւանի Վ.Բյուրսովի անվան պետական լեզվա-հասարակագիտական համալսարանի դասախոսներից, ուսանողներից, կամավորներից կազմված 60 հոգանոց թիւն: Նրանք ներկայացրին տարբեր երկրների մշակույթը, ազգային խոհանոցը, լեզուները: Ի դեպ, ուսանողներն այն երկրի ազգային տարազով էին, որի լեզուն իրենց ներկայացնում էին:

Համալսարանը կրթական այն օջախներից է, ուր ամուր հիմքերի վրա է դրված լեզուների ուսուցումը: «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես» ժողովրդական ասացվածքի իմաստը հիմա նորովի է մեկնաբանվում: Համաշխարհային պրոցեսների զարգացումներից հետ չմնալու համար հրատապ է դարձել լեզուների իմացությունը: Լեզու իմացար, ուրեմն, ունես տեղ եւ դեր ժամանակի հողվույթում:

Գորիսի թիվ 6 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Ինեսա Բարսեղյանը ցանկանում է իրավաբան դառնալ:

